

Արձանագրություն №4 (288)

ԵՊՀ-ի ռուս բանասիրության ֆակուլտետի գիտական խորհրդի 2016 թ.-ի փետրվարի 18-ի նիստի

Գիտխորհրդի նիստը վարում էր ֆակուլտետի դեկան դոցենտ Պ.Բալայանը:

Նա տեղեկացրեց, որ ֆակուլտետի գիտխորհրդի նիստին ներկա են 28 անդամներից 23-ը: Ապահովված է անհրաժեշտ քվորումը:

Բաց քվեարկությամբ միաձայն հաստատվեց գիտխորհրդի նիստի օրակարգը:

Օրակարգ.

1. Ռուս բանասիրության ֆակուլտետի գիտական խորհրդի կազմում փոփոխություններ մասին:
2. Ձմեռային քննաշրջանի արդյունքների մասին:
3. Ռուս բանասիրության ֆակուլտետի բակալավրիատի և մագիստրատուրայի ծրագրերի կառուցվածքի և բովանդակության մասին:
4. Հայցորդ Սվետլանա Բարսեղյանի աշխատանքի գիտական խեկավարի հաստատման հարցը:
5. Ա.Խիզանցյանի և Վ. Ադամյանի թեմաների և դեկավարների հաստատման հարցը:
6. Որակավորման բարձրացման դասընթացի մասին:
7. Ընթացիկ հարցեր:

1. Ֆակուլտետի դեկան դոցենտ Պ.Բալայանը տեղեկացրեց, որ ռուս բանասիրության ֆակուլտետի գիտական խորհրդի կազմում տեղի են ունեցել փոփոխություններ:

Ռուս բանասիրության ֆակուլտետի ՈԻԳԸ նախագահի պաշտոնում Սերինե Վարդանի Մկրտչյանի փոխարեն ընտրվել է ռուս բանասիրության ֆակուլտետի "ռուսաց լեզու և գրականություն" մասնագիտության հեռակա բաժնի 4-րդ կուրսի ուսանող Կարպիս Սարգսի Անումյանը:

2. Ֆակուլտետի դեկանի տեղակալ դոցենտ Դ. Գազարովան ներկայացրեց 2015-2016 ուս.տարվա ձմեռային քննաշրջանի արդյունքները: 236 ուսանողներից 2-ին չեն թույլատրել մասնակցել քննաշրջանին վարձը չվճարելու պատճառով: 54 ուսանող ունեն պարտքեր, որոնցից 36 - 3-րդ կուրսի ուսանողներ են: Թվով ամենաշատ լուծարքները Արտասահմանյան գրականություն, շառահյուսություն և լեզվի պատմություն առարկաներից են: Գոհացնող չէ վիճակը ՄՄՀ բաժնում: 16 ուսանողներից 14-ը պարտքեր ունեն լեզվի պատմություն առարկայից: 1-ին կուրսում ուսանողների կեսը չստուգված ունի ռուսաց լեզվի պրակտիկում առարկայից: Մակայն ուրախալի է, որ 2-րդ կուրսում այդ թիվը 3-ն է:

Դեկանատը հետևողական է քննությանը առանց ստուգարքային գրքույկի ներկայանալու հարցում:

Այս կիսամյակում ամփոփագրի ներկայության նիշը լրացնում էր դեկանատը, ինչը զգալիորեն արագացնում է աշխատանքը: Մակայն դարձյալ եղան ամփոփագրի և ստուգարքային գրքույկի միջև անհամապատասխանության դեպքեր, ինչի առիթով ստիպված էինք զեկուցագրեր գրել:

Ներկա-բացակա-ն խնդրում ենք անել 10 ր. ընթացքում և լրացնել մատյանի բոլոր սյունակները: Ուշացումներ նշել չի կարելի:

3. Ռուս բանասիրության ֆակուլտետի բակալավրիատի և մագիստրատուրայի ծրագրերի կառուցվածքի և բովանդակության մասին հարցով ելույթ ունեցավ Ֆակուլտետի դեկան ղոցենտ Պ.Բալայանը: Կա փաստաթուղթ, համաձայն որի ֆակուլտետները մինչև մարտի 10-ը պետք է առաջարկներ ներկայացնեն բակալավրիատի և մագիստրատուրայի ծրագրերի կառուցվածքի և բովանդակության մասին: Դա կարևոր է, քանի որ եթե մենք ոչինչ չներկայացնենք, հետագայում ոչինչ չենք կարողանա փոխել: Իսկ առաջարկներ կարելի է անել , պահպանելով մեկ կիսամյակի համար նախատեսված 30 կրեդիտը և 30 տոկոս պարտադիր առարկաների ժամերը: Օրինակ, կարելի է միավորել մեկ առարկայի- լեզվի պատմություն - մեջ հին սլավոներենը և հին ռուսերենը: Հարկավոր է ուժեղացնել հայերեն- ռուսերեն բաղադրիչը ՄՄՀ բաժնում: Ամբիոնների վարիչներին կխնդրեմ մոտ ժամանակներում առաջարկներ ներկայացնել:

4. Լսեցին ' հայցորդ Սվետլանա Բարսեղյանի աշխատանքի գիտական խեղճվարի հաստատման հարցը:

Ելույթ ունեցավ ռուսաց լեզվաբանության, տիպաբանության և հաղորդակցման տեսության ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆեսոր Լիլիթ Գեորգի Բրուսյանը:

Որոշեցին ' Վանաձորի պետական համալսարանի ռուս բանասիրության ֆակուլտետի ռուսաց լեզվի ամբիոնի հայցորդ Սվետլանա Սերյոժայի Բարսեղյանի թեկնածուական ատենախոսության ղեկավար նշանակել ԵՊՀ ռուս բանասիրության ֆակուլտետի ռուսաց լեզվաբանության, տիպաբանության և հաղորդակցման տեսության ամբիոնի պրոֆեսոր, բ.գ.դ. Ռուզան Ռուբենի Գրձեյանին:

5. ա. Լսեցին ' Վ. Ադամյանի թեմայի և ղեկավարի հաստատման հարցը:

Որոշեցին ' Հաստատել ռուսաց լեզվաբանության, տիպաբանության և հաղորդակցման տեսության ամբիոնի հայցորդ Վերա Արթուրի Ադամյանի թեկնածուական ատենախոսության հետևյալ թեման՝ "Речевой акт просьбы в русской лингвокультуре (в сопоставлении с армянской и английской)" - "Խնդրանքի խոսողական ակտը ռուսական լեզվամշակույթում (հայերենի և անգլերենի գուղադրությամբ)", որը համապատասխանում է Ժ. 02.04 - "Մլավոնական լեզուներ (ռուսաց լեզու)" և Ժ. 02.03 - "Համեմատական և տիպաբանական լեզվաբանություն" մասնագիտությունների և թեկնածուական ատենախոսության գիտական ղեկավար նշանակել ԵՊՀ ռուս բանասիրության ֆակուլտետի ռուսաց լեզվաբանության, տիպաբանության և

հաղորդակցման տեսության ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆեսոր Լիլիթ Գեորգի Բրուտյանին:

բ. Լսեցին՝ Ա.Խիզանցյանի թեմայի և ղեկավարի հաստատման հարցը:

Որոշեցին՝ Հաստատել ռուսաց լեզվաբանության, տիպաբանության և հաղորդակցման տեսության ամբիոնի ասպիրանտ Աննա Մարտիրոսովնա Խիզանցյանի թեկնածուական ատենախոսության հետևյալ թեման՝ "Лексико-грамматические особенности русского литературного языка первой трети 18 века (на материале сочинений И.Т.Посошкова)" - "18-րդ դարի առաջին երրորդի ռուս գրական լեզվի բառաքերականական առանձնահատկությունները (Ի.Տ. Պոսոշկովի ստեղծագործությունների նյութի վրա)", որը համապատասխանում է Ժ. 02.04 - "Մլավոնական լեզուներ (ռուսաց լեզու)" և թեկնածուական ատենախոսության գիտական ղեկավար նշանակել ԵՊՀ ռուս բանասիրության ֆակուլտետի ռուսաց լեզվաբանության, տիպաբանության և հաղորդակցման տեսության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Իվետա Կարապետի Մանուչարյանին:

6. Որակավորման բարձրացման դասընթացի մասին:

Ֆակուլտետի ղեկան դոցենտ Պ.Բալայանը տեղեկացրեց, որ շուտով կազմակերպվելու է որակավորման բարձրացման մասնագիտական դասընթաց. 10 ժամ գրականություն, 10 ժամ ռուսաց լեզու:

7. Ընթացիկ հարցեր: Ֆակուլտետի ղեկան դոցենտ Պ.Բալայանը տեղեկացրեց, որ քննությանը տեխնիկական միջոցներից օգտվելու համար հեռացվել է իրավաբանական ֆակուլտետի ուսանողուհի: Մեր ուսանողները նույնպես տեղեկացված են: Կղիմենք, որպեսզի 202 և 206 լսարաններում շերտավարագույր տեղադրեն:

Գիտական խորհրդի նախագահ՝

Պ.Բ. ԲԱԼԱՅԱՆ

Գիտական խորհրդի քարտուղար՝

Մ.Ռ. ԴՊԻՐՅԱՆ